ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԼՂՀ ֆինանսների նախարարության 2015 թվականի դեկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2015 թվականին ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 33072.6 մլն դրամ՝ պլանավորված 33000.0 մլն դրամ ցուցանիշը գերակատարելով 0.2 %-ով կամ 72.6 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 9.8 %-ով կամ ավել 2953.9 մլն դրամով:

Դեկտեմբեր ամսում ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 5836.7 մլն դրամ՝ կազմելով պլանավորված 5900.0 մլն դրամ ցուցանիշի 98.9 %-ը, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերակատարվել է 19.8 %-ով կամ ավել 964.8 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) են թվով 53 տնտեսավարող սուբյեկտ և լուծարվել (հաշվառումից հանվել)՝ 6 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են 51 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 467.4 մլն դրամ: Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 82 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 39-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 12-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 11-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝ գործունեության չծավալման և 15 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 23 վարչական գործ՝ 31.7 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 14 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 28.7 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 107 վարչական գործով սահմանվել է 1.6 մլն դրամ վարչական տուգանք:

Նախաքննության ընթացքում գտնվող 1 քրեական գործով վերականգնվել է պետության հասցված 250.0 հազ. դրամի չափով վնասը:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել են 5115 հաշվարկ-հաշվետվություն, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ընդունվել են 573 գրանցման հայտ և 2827 եկամտային հարկի հաշվարկ:

Էլեկտրոնային հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 47 պայմանագրեր:

Ծրագրային նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել 2016 թվականի հունվարի 1-ից հարկային հաշվարկների էլեկտրոնային եղանակով ընդունումն ապահովելու նպատակով:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 13 վարձու աշխատողի՝ 2.6 մլն դրամի չափով:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է ԼՂՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ալկոհոլային խմիչքի դրոշմավորման համար «2016» թվագրմամբ ակցիզային դրոշմանիշի նմուշը:

Դեկտեմբերի 3-ին Արցախի Հանրապետության Նախագահ Բակո Սահակյանը հանդիպում է ունեցել նախարարության ղեկավար անձնակազմի հետ, որի ընթացքում քննարկվել են հանրապետության հարկային ոլորտին վերաբերող մի շարք հարցեր: Նախագահը կարևորել է ստվերային շրջանառության կրճատմանն ուղղված վարչարարության անաչառ և հետևողական միջոցառումների իրականացումը, տվել համապատասխան հանձնարարականներ, որի համաձայն հաշվետու ամսում սկսվել է «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի մշակման աշխատանքները:

Հաշվետու ամսում աշխատանքային այցով Արցախի Հանրապետություն է ժամանել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պատվիրակությունը՝ կառույցի ղեկավար Գագիկ Խաչատրյանի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում քննարկումներ են ընթացել երկու կառույցների փոխգործակցության, եռամյա համագործակցության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքի, գործնականում առաջացած խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հնարավոր տարբերակների շուրջ: Պատվիրակության անդամների կողմից ներկայացվել են նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունում իրականացվող կառուցվածքային բարեփոխումները, տեղեկատվական ոլորտում արձանագրված ձեռքբերումներն ու նախարարության գործունեությանը վերաբերող ամփոփ ցուցանիշները:

Նախարարության մեկ աշխատակից մասնակցել է Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (ՀՄՆԿ-IOTA) կողմից Հունգարիայի Բուդապեշտ քաղաքում

կազմակերպված «Ինչպես խրախուսել հարկ վճարողներին օգտագործել թվայնացված ծառայությունները» թեմայով սեմինարին, ևս երկու աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

ՀՀ և ԼՂՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հարկ վճարողների կողմից առավել հաճախակի բարձրացվող հարցերի հիման վրա հրատարակվել է «Պարզաբանումներ հարցերի և պատասխանների տեսքով» գրքույկը:

Պատրաստվել և զանգվածային լրատվամիջոցներին է ներկայացվել մեկ հայտարարություն:

Հաշվետու ամսում նախարարության մասնագետը մասնակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների ղեկավարների համար կազմակեպված սեմինար-դասընթացներին՝ ներկայացնելով գույքային հարկերի հաշվառմանն ու հավաքագրմանը վերաբերող թեմաները:

Դեկտեմբերի 5-ին անց է կացվել բաց մրցույթ, որի արդյունքներով 13 դիմորդներից 2-ը հաղթող են ճանաչվել և նշանակվել հարկային ծառայության պաշտոնների: Համակարգում նոյեմբեր ամսում կազմակերպված ուսուցողական սեմինարների արդյունքներով անց է կացվել նաև ստուգարք:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 419, ելքագրվել՝ 187 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի: